

ՀԱՎԵԼԱԶՆՁՅՈՒՆ «Բ»-Ն ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

2. 2. ԿԱՐԱԳՅՈՋՑԱՆ

Հայերենը ունի ձևական բնույթի տարրեր ու բազմապիսի ածականներ, որոնցից մեկը հավելահնչյուն «ր»-ն է: Որպես կանոն այն հիմնականում հանդես է գալիս բառի առաջին վանկի բաց ձայնավորից հետո: Օրինակ, բաժա-նեկ, լայց նաև՝ բաբ-ժա-նեկ: Այս իրողությունը փաստարկվում է հայ մատենագրության տվյալներով: Օրինակ, «Ապա ի նուազել տէրութեանն Բագրատունեաց <...> հատեալ, բարժանեալ եղեն ամենայն գահք նախարարացն»¹:

Խոսելով բաժանել բայի բարժանել ձևի մասին, Հ. Աճառյանը միջնադարյան հայ հեղինակներից բերում է սույն բառի մի շարք այլ ձևեր ևս, ինչպես՝ բարժանող, բարժանողութիւն, բարժանումն, բարժանակութիւն. բարժիւն, անբարժ և ավելացնում, որ «այս բառերի մեջ գտնված ր ձայնը ստուգարանորեն չի արդարանում»², ինչը նկատելի է նաև տուծել և տուրծել ղուլգի մեջ, որը նույնպես հանդես է գալիս «Ե հավելվածով»³, Դեռ ավելին, Հ. Աճառյանը այն անվանում է «մակարոյթ ր», որը հանդիպում է «ղաշոյն կամ ղարշոյն, ղաժան կամ ղարժան» ղուլգերում և այլուր⁴:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տվյալ երևույթը հատուկ է ոչ միայն հայերենի բառապաշարին առհասարակ, այլ նաև հայկական անձնանուններին մասնավորապես: Թվենք այն ղեպքերը, երբ հավելահնչյուն ր-ն հանդիպում է հայկական անձնանուններում:

1) Ա. քաղ. Գաղու (Gagu)⁵ > հալ. Գագ' («<...> առաքեցին <...> և Վիագ իշխանն Հաշտենից») ⁷ > *Գագուլ⁸ (նվազական -ուլ մասնիկով, որը հանդիպում է հին հայկական անձնանուններում⁹ ու հայերենի բարբառներ-

¹ Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Սակփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910 (կաղմի վրա՝ 1911), էջ 299:

² Հ. Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. I, II, III, IV, Երևան, 1971, 1973, 1977, 1979 (այսուհետև՝ ՀԱՌ), I, էջ 381:

³ ՀԱՌ, IV, էջ 420:

⁴ Հ. Հ. Աճառյան. Լիակատար բերականություն հայոց լեզվի. VI, Երևան, 1971, էջ 634:

⁵ И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту.—«Вестник древней истории», 1951, №№ 2, 3, 4 (այսուհետև՝ АВИИУ), № 73:

⁶ Հ. Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. I, II, III, IV, V, Երևան, 1942, 1944, 1946, 1948, 1962 (այսուհետև՝ ՀԱԱՌ), I, էջ 428:

⁷ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց. Տիգրիս, 1913, էջ 260:

⁸ Հայերենի համար վերականգնված *Գագուլ ձևը իրականում գոյություն ունի Համշենի բարբառում, ինչպիսի կազմություն ունի, ասենք, ժամանակակից խոսակցական հայերենում հանդիպող Սախուլ (<Սաբո<Սարգիս) կամ Վեխուլ (<*Վեմիր<Վեմիհր) անձնանունը: Համշենի բարբառում հանդիպում են նաև նման կազմությամբ հետևյալ անձնանունները. Սախուլ (<Մաթոս<Մաթևոս), Սախուլ (<?), Արուլ (<Աթանես), որից նաև Արուլյան ազգանունը, Շախուլ (իկ) (<Շախարշ), Մարգուլ (իկ) (<Մարգո<Մարգարիտ), Նախուլ (<Նահապետ, որից էլ Խորհրդային Միության հերոս Մարտիրոս Կարապետի Նահուլյանի (1920—1945 թթ.) ազգանունը:

⁹ Սույն նվազական -ուլ մասնիկը հանդիպում է այլ անձնանուններում ևս, ինչպես՝ Խաբուլ (ՀԱԱՌ, II, էջ 257): Ընդ որում, Հ. Աճառյանը Խաբուլ անձնանունը բխցնում է հայերենի

րում¹⁰ և թերևս զուգահեռ ունի լատիներենում¹¹ և մի շարք հին տեղանուններում¹²) > *Գաջուլ (Գ>ջ անցումով)¹³ > Գաջուլ կամ Գաջուլ (α<...>

բաբուլ բանաստեղծների առերի ոտքը բառից (ՀԱԱԲ, II, էջ 257): Մենք թաքուլ անձնանունը բացատրել ենք այլ կերպ (Հ. Հ. Կարապետյան. Ուրարտական գաղափարագիր անձնանուններ.— «Ուրարտական հասարակական գիտություններ», 1984, № 1, էջ 72—73). էլամ. (մ. թ. ա. XXV և XVII դդ.)՝ Ta-a-ta (Ю. Б. Юспф ов. Элам. М., 1968, с. 104; Э. Бикерман. Хронология Древнего мира. М., 1975, с. 189—190; В. Хннц. Государство Элам. М., 1977, с. 178—179), արաբ. (մ. թ. ա. IX դ.)՝ Tāta (АВИИУ, № 34), ուրարտ. (մ. թ. ա. VII դ.)՝ նույնպես Tāta (И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.—Л., 1963, № 4, лс, стк. 6) > հայ. Թաթ, իսկ նվազական —ուլ մասնիկով՝ Թաթուլ, որով կոչվում էր նշանավոր հայ իշխաններից մեկը՝ Թաթ Կամսարականը (Ղազարայ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան. Տփղիս, 1904, էջ 86) կամ, որ նույնն է, Թաթուլ Կամսարականը (Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց Պատերազմին. Երևան, 1957, էջ 193, ծան. 6):

¹⁰ Նվազական —ուլ մասնիկը բավական տարածված է Համշենի բարբառում: Օրինակ, մոնշուլ «երևիսա» (մաճշ «տղա» բառից), քաթուլ «ճյուղիկ» (քաթ բառից), փուճուլ «փնջիկ», գուճուլ «գնդիկ», գուճուլ «կիտուկ», ծիթուլ «(հավի) ձագուկ», բուճուլ «բիր» (ԲԻԲ>*ԲԻԲուլ>բուճուլ անցումով), բուճուլ «թմրիկ» և այլն, որը հանդիպում է նաև Ղարաբաղի բարբառում, ինչպես քանթուլ «թաթիկ» (քաթ բառից՝ և աճականով):

¹¹ Հիշյալ նվազական —ուլ մասնիկը լատիներենում հանդես գալով արական, իգական և շեգոր սեռի բառերի հետ, ստանում է տարբեր ձևեր և, ըստ այդմ, կազմում տարբեր շարքեր: Դրանցից մեկն է -ulus (արական), -ula (իգական) և -ulum (շեգոր) շարքը: Տեղանուններում տարածված են -ula վերջավորությամբ ձևերը, որոնք լատիներենի բառապաշարում վկայված են բազմաթիվ օրինակներով: Արական անձնանուններում այն հանդիպում է -ulus ձևով, ինչպես Հռոմի հիմնադիր Լրվիորյակ եղբայրներից մեկի անվան մեջ: Հայտնի է, որ նրանցից մեկը կոչվել է Romus, ինչպես վկայում են լավագույն ձևագրերը և ոչ թե Remus, ինչպես կարծվում է Լրվելոն (Страбон. География. М., 1964, с. 811), իսկ մյուսը՝ Romulus (Страбон. V, 3, 2): Հետևաբար, երկվորյակ եղբայրները կոչվել են միևնույն անունով, սակայն նրանց ավագության և կրտսերության հանգամանքը ցույց տալու համար է, որ ավագը կոչվել է Ռոմ (Romus), իսկ կրտսերը՝ Ռոմուլ (Romulus), այսինքն՝ Ռոմ և Ռոմիկ, ինչպես կլիներ մամանակակից հայերենում:

¹² Օրինակ, Պոնտոսում՝ URU Kašula (Г. А. Капанцян. Хауса — колыбель армян. Ереван, 1947, на обложке—1948, с. 53). Ազմեթբուլ՝ URU Gidbula (АВИИУ, № 42). URU Mašula (D. D. Luckenbill. Ancient Records of Assyria and Babylonia. I. Chicago, 1926, № 498). Կորդուքում՝ Sariula (Հ. Գ. Մելիքոյան. Հայաստանի հարաբերությունների պատմություն. Երևան, 1970, էջ 184), Պիսիդիայում՝ Nazula (W. M. Ramsay. The Historical Geography of Asia Minor. London, 1890, p. 413), Լիդիայում՝ Trakoula (W. M. Ramsay. p. 127), Բյուսալ (Strabo, XIV, 1, 47), Պոնտական Կապադոկիայում՝ Μεγαλοα. Μεγαλοα (Ptol., V, 6, 10. V, 6, 6), Թրակիայում՝ Βεργουλη Ptol., III, 11, 12), Կամպանիայում՝ Τριζουλα. Τριζουλα (Strabo, V, 3, I, V, 4, 11). Մարդինիայում՝ Τριζουλα (Ptol., III, 3, 5), Իսպանիայում՝ Τριζουλα (Ptol., II, 6, 61), Կարթագենում՝ Μαξουλα (Ptol., IV, 3, 31) և այլն:

¹³ Հայերենում α>ջ անցումը վկայված է հնդեվրոպական հիմք լեզվից հայերենին անցած բառերում: Օրինակ, հ.-հ. g²hermo>հայ. ջերմ, հ.-հ. g²hisla>հայ. ջիլ, ջիլ, հ.-հ. g²hin>հայ. ջին (ջեն) և այլն (Հ. Հ. Ահառյան. Հայոց լեզվի պատմություն. I, Երևան, 1940, էջ 70): Հիշյալ գ>ջ անցումը վկայված է նաև փոխառյալ բառերում և տեղանուններում: Օրինակ, ուրարտ. ulguše «ողջութիւն» (արմատը՝ ulg-) > հայ. ողջ (Գ. Ա. Ղափանյան. Ուրարտույի պատմություն. Երևան, 1940, էջ 39, 220), ուրարտ. egude «գեղափ-աջ» (արմատը՝ egu) > հայ. աջ, սևո. աջոյ (Հ. Հ. Կարապետյան. Արեւելյան Հայաստանի ուրարտական տեղանուններ.— «Ուրարտական հասարակական գիտություններ», 1978, № 10, էջ 71), ուրարտ. URU ʾimīru «վիարուրիս Լրվի»՝ հետագայի Գուգարբի, բնակավայրերից մեկը) > հայ. Ամուշ (գյուղ Թումանյանի շրջանում, Օձունի մոտ) (նույն տեղում, էջ 71):

կարգէ զԳարշուլ Մաղխազ նահապետ հորիսոռունեաց ի վերայ զօրունս¹⁴, «Դատոյ ի Գարշուղեանս»¹⁵), որը գործածվել է միայն IV—V դդ. և որը Հ. Աճառյանի կողմից դիտվել է որպես անհայտ ծագումով անձնանուն¹⁶:

2) Հին պարսկ. Արտախշաթրա (Artaxšaθra)¹⁷ > միջին պարսկ. Արտախշասա (Artaxšaça)¹⁸ > հուն. Արտաքսերքսես ('Αρταξέρξης)¹⁹ > հայ. (վկայված արամեերենով, սակայն ժամանակն ձևով) Արտաքսերքսես ('rtksrk[s]s)²¹, այն է՝ Արտաշես I-ի (189—161 թթ. մ. թ. ա.) անունը՝ վկայված Իջևանի շրջանի Թեղուտ գյուղի մոտակայքում հայտնաբերված արամեատառ արձանագրության մեջ:

3) Միջին պարսկ. Վալախշ (Wlǰšy²², ընթերցվել է Valaxš²³), որից, բնականաբար, Walaš (պարսկերենում և արաբերենում այն հանդիպում է Walaš կամ Balaš ձևով)²⁴ > հայ. *Վաղաշ > *Վարդաշ (մեր կարծիքով, որից հետագայում դրափոխությանը) > Վաղարշ²⁵ (սեփա մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսներորդի և երկրորդի ամի հոմանուանն իւրոյ Վաղարշոյ Պարսից արքայիս)²⁶:

4) Հայ. Աշուշալ²⁷ (Վարդան Մամիկոնյանի ևղբոր՝ Հմայակ Մամիկոնյանի փեսան) — Ašušā(y)²⁸ (որը հայտնի է նաև հունարենով [Ἀσ]ουσαշ²⁹, ինչպես նաև համանուն մեկ այլ անձնավորություն, սակայն Աշուշ ձևով, որ հիշատակված է Իջևանի շրջանի Սալահ գյուղում XI—XII դդ. կառուցված Ս. Ասովածածին եկեղեցու հարավային ավանդատան առաջին հարկի մուտքից վերև անթվական մի արձանագրության մեջ. α<...>εσ՝ Աշուշս եւ որ-

¹⁴ Մովսես Խորենացի, էջ 267 և ծան. 16: Կարծուլ անձնանունը հիշատակվում է նաև այլ պատմիչների մոտ:

¹⁵ Գրք Ողթոց. Մասենապրոմիւն նախնեաց. Թիֆլիս, 1901, էջ 74:

¹⁶ ՀԱԱԲ, I, էջ 450:

¹⁷ Ferdinand Justi. Iranisches Namenbuch. Marburg. 1895, S. 3.

¹⁸ R. G. Kent. Old Persian. Grammar, Texts, Lexicon. New Haven, 1953 (այսուհետև՝ OldP), p. 171.

¹⁹ Xen., Anab., I, 1, 1 և այլուր, Strabo, I, 3, 4 և այլուր:

²⁰ Գ. Հ. Կարտիսյան. Արամեերեն նորահայտ երկու արձանագրություններ. — Պատմ.-մտ. քանասիրական հանդես, 1971, № 3, էջ 276:

²¹ A. G. Perikhanian. Les Inscriptions Araméennes du roi Artachès. — Revue des Études Arméniennes, NS, VIII, Paris, 1971, p. 170.

²² Philippe Gignoux. Glossaire des Inscriptions Pehlevies et Parthes. London, 1972, p. 66.

²³ ՀԱԱԲ, V, էջ 30:

²⁴ F. Justi, S. 345—346.

²⁵ F. Justi, S. 346, ՀԱԱԲ, V, էջ 30, Ծրկու. ղեպքում էլ հավելահնչյունն ը-ի մասին ոչինչ չի ասված:

²⁶ Մովսես Խորենացի, էջ 199:

²⁷ Վաղար ֓արսկի, էջ 47, 52, 55, 59, 107, 110, 111: Մովսես Խորենացի, էջ 340:

²⁸ F. Justi, S. 48.

²⁹ J. Marquart. Erānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i. Berlin, 1901, S. 169.

դիս իմ<...>³⁰)> դարձյալ հայ. (վկայված վրացերենով)՝ Առշուղա (აღშულა)³¹,

5) Հուն. Բասիլեոս (Βασίλειος, որը ծագում է βαςίλειος «արքա» բառից)³²> հայ. Բասիլ (<...>տէր Բասիլ՝ Մոկաց եպիսկոպոս»³³, «Բասիլ եպիսկոպոս Մոկաց»³⁴)> *Բաւսիլ (մեր ենթադրությամբ)> Բաւսիդ³⁵> Բաւսեղ, մի անուն, որը գործածվում է V դարից սկսած մինչև մեր օրերը³⁶,

6) Հայ. Բաշդ³⁷> դարձյալ հայ. Բաշդ³⁸ (վկայված է նաև Բաշլ ձևով)³⁹, Հ. Աճառյանը այս անվան ծագումը համարում է անհայտ⁴⁰, որը, սակայն, մեր կարծիքով, նախորդ անվան տարբերակներից մեկն է:

7) Հայ. Վասիլ (հուն. Βασίλειος «արքա» բառից ծագած Βασίλειος անձնանունից)⁴¹, որը հանդիպում է ինչպես հայ մատենագրության մեջ⁴² և հայերեն ձևագրերի հիշատակարաններում («Զմեռալք լցեալս զՎասիլ Հայեկեցիս յիշելու արժանի արարէք»)⁴³, այնպես էլ Անիի⁴⁴, Գեղարքունիքի⁴⁵ և Արցախի⁴⁶ IX—XVI դդ. վիճագիր արձանագրություններում> դարձյալ հայ. Վաւսիլ (Գորիսի շրջանի Շինուհայր գյուղի՝ 1261 թ. վիճագիր արձանագրության մեջ)⁴⁷,

³⁰ Դիվան հայ վիճագրության, VI, կազմեցին Ս. Ա. Ավագյան և Հ. Մ. Ջանիուրյան. Երևան, 1977, էջ 122 (№ 249): Դժբախտաբար, աշխատության հեղինակները ենթադրում են, որ տվյալ Առշուղ անունը «առաջին անգամ է հանդիպում և այլուստ վկայված չէ» (նույն տեղում, էջ 123):

³¹ Яков Цуртавский. Мученичество Шушаники. Тбилиси, 1938, с. 3.

³² ՀԱԱՐ, I, էջ 392:

³³ Ղազար ֆարպեցի, էջ 44:

³⁴ Եղիշե, էջ 28:

³⁵ Գարեգին վ. Հովսեփյան. Խոսրովիկ թարգմանիչ (Ը դար). Վաղարշապատ, 1999, էջ 196 (բնագրի): Տվյալ դեպքում խոսքը Բաւսեղ Կեսարացու (331—379 թթ.) մասին է (ՀԱԱՐ, I, էջ 392):

³⁶ ՀԱԱՐ, I, էջ 392: Հ. Աճառյանը Բաւսեղ անվան մեջ Բ-ի հավելահանդուր լինելու մասին ոչինչ չի նշում: Բաւսեղ անվան -եղ վերջավորությունը ծագում է -իլ ձևից, այսինքն՝ կատարվել է -իլ>եղ անցում, ինչպես այն հանդիպում է Մուշեղ, Խուրեղ և նման այլ անունների մեջ:

³⁷ Ղազար ֆարպեցի, էջ 129:

³⁸ Նույն տեղում, էջ 130, 134:

³⁹ Նույն տեղում, էջ 134:

⁴⁰ ՀԱԱՐ, I, էջ 391:

⁴¹ ՀԱԱՐ, I, էջ 392, V, էջ 54:

⁴² Մատթևոս Ուսահայեցի. Ժամանակագրություն. Վաղարշապատ, 1898, էջ 299, 306, 307, 323, 338, 370 և այլ պատմիչների մոտ: Ի տարբերություն նույն անունը կրող մյուս նշանավոր մարդկանց, այս մեկը կոչվում էր Գաղ Վասիլ և իշխում էր Մարաշի և մի քանի այլ քաղաքների վրա Խուրեն I-ի (1080—1095 թթ.) ժամանակներում:

⁴³ Հայերեն ձևագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 811:

⁴⁴ Դիվան հայ վիճագրության, I, կազմեց Հ. Ա. Օրբելի. Երևան, 1966, էջ 34 (№ 98):

⁴⁵ Դիվան հայ վիճագրության, IV, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1973, էջ 52 (№ 290), 112 (№ 453), 157 (№ 638):

⁴⁶ Դիվան հայ վիճագրության, V, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1982, էջ 30 (№ 61):

⁴⁷ Դիվան հայ վիճագրության, II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1960, էջ 55 (№ 137): Վասիլ>Վաւսիլ զուգահեռը ափսոս քան տասը տարի առաջ օգտագործված է համապատասխան դրականության մեջ (Ս. Ա. Ավագյան. Վիճական արձանագրությունների հանձնարարություն. Երևան, 1973, էջ 352):

8) Հայ. Վադյէն = Վասքեն (Wasken)՝ (Գուգարքի Աշուշա բղւշխի սրբին, Վարդան Մամիկոնեանի դստեր՝ Շուշանիկի ամուսինը՝)՝ դարձյալ նոյ. (վկայւթած վրացեւրենով)՝ Վասքեն (զասքեն). «Եւ նույն ժամանակ կար Սոմխիթում մարդ մի. որոյի (մի) մեծավորի. անունովս Վասքեն» (ՎՃԹ Թանգ Դաժնա Դյո Նոճնոտ յաճոյ Երտո, Ծցոլո մտաճարտա, Նաճեղոտ զասքեն)՝, իսկ յառ. Վասքեն (Յահնգեն)՝:

9) Հայ. Աշոտ («Իսկ Աշոտ Լիւթայր Վալէի» գնա «ի լեռնն Սիմ, ի տեղի Հայրենեաց ընակութեան աշխարհին Տարունոյ»⁴⁸, —մ. թ. ա. III դար, «և» Երթնայ Աշոտ <...> մտանէ ի լեռնն <...> ի կողմանց Հաշտենից <...> և մեռանի անդ անդգուշարար»⁴⁹, —մ. թ. ա. II դար)՝ դարձյալ Հայ. Աշոտ («Արշոտ ի Վարադտիրոցեան»)՝⁵⁰, Հայ իշխաններից մեկը, որ 554 թ. մասնակցել է Դիլիի Երկրորդ ժողովին: Հ. Աճառյանը, օգտագործելով մեր իսկ նշած տղրյուրը, միևնույն անձնավորության անունը, դժբախտաբար, հիշատակում է առանց հավելահչյուն Բ-ի («Աշոտ ի Վարադտիրոցեան»)՝⁵¹, որը սակայն այլոց կողմից օգտագործված է ընագրին միանգամայն համապատասխան ձևով («Արշոտ ի Վարադտիրոցեան»)՝⁵²:

10) Հայ. Զաւէն («<...> յերկրորդ ամի Վարադդատայ եկաց Լախ-կոյոսապեա Հայոց Զաւէն»⁵³, այսինքն՝ Զավեն Մանազկերտցի կաթողիկոսը (377—381 թթ.), որ ընդ որ քահանաներին սովորեցրեց զինվորական հազուստ հագնել («<...> զի ամենայն քահանայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց»)՝՝՝ դարձյալ Հայ. *Զաւէն, որից դրամիոխությամբ՝ Զաւէն («Եւ ապա Շահալ, և Զաւէն, և Ասպուրակ կացին կաթողիկոսք»)՝⁵⁴, որը նման դրութեան պատճառով (Զաւէն) հանդիպում է նաև հնչյունափոխված ձևով (Զորէն)՝⁵⁵:

11) Հայ. Մկրտիչ («<...> Լսպան զՅովհաննէս Մկրտիչ»⁵⁶, «<...> իշխար սրբոյն Յովհաննու Մկրտչին»⁵⁷, որը աստիճանաբար վերածվում է

48 Սիմէոն վարդապետի Ապարանցոյ Վիպասանութիւն սակս Պահլաւունեաց զարմի և Մամիկոնեանց սևոի. Վաղարշապատ, 1870, էջ 58: Վկայւթած է «Երնդրէր զարիւնըն Վադյէնն» բունտոսեղծակոտ տողի մէջ:

49 F. Justi, S. 359.

50 ՀԱԱԲ, V, էջ 5:

51 Картлис цховреба (История Грузии). I, Тбилиси, 1955 (далее—КЦ). с. 216. Չխպրերի տարրեթկրցումներում տվյալ անունը հիմնականում վկայված է սխալագրությամբ՝ Վաւէն (զաւէն). որը ցոյց է տալիս այս անվան՝ վրացիների համար խորթ լինելը:

52 Լ. Մ. ՄԼԻԻՔԱՆՔ-ԲԼԿ. Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, I, Երևան, 1934, էջ 11, 12:

53 Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց. Ս. Պետրոսբուրգ, 1897, էջ 51:

54 Նույն տեղում, էջ 55:

55 Գիրք թղթոց, էջ 74:

56 ՀԱԱԲ, I, էջ 180:

57 Գաւր Եգիւն Ա կաթողիկոս. Յիշատակարանք ձեռագրաց, I. Անթիլիաս, 1951, էջ 6, ծան. 1 (Մ 2):

58 Մոսկուս Խորենացի, էջ 309:

59 Փատմոսի Բուղանդաւոյ Պատմութիւն Հայոց ի լորս զպրովինու. Վենետիկ, 1832, էջ 263:

60 Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի դրոց պատմադրաց. Վաղարշապատ, 1893, էջ 267:

61 Նույն տեղում, էջ 268:

62 Մոսկուս Խորենացի, էջ 147:

63 Վատմութիւն Տարունոյ զոր թարգմանեաց Զենոր <Գլակ> Ասորի. Վենետիկ, 1889, էջ 8:

հատուկ անվան⁶⁴. «<...> և գտալ անդ զսուրբ Մկրտիչն»⁶⁵ և հայկական միջավայրում սովորական է դառնում VIII դարից սկսած⁶⁶) > դարձյալ հայ. Միկիչ (որը Մկրտիչ անվան կրճատ ձևերից մեկն է⁶⁷ և հիշատակված է 1591 թ. Վարդենիսի շրջանի Մովակ գյուղի գերեզմանատան տապանաքարերից մեկի վրա. «Ես՝ Միկիչս, կ(ա)ն(կն)եցի խ(ա)չ(ս) Գր(իգ)որին <...>»⁶⁸, ինչպես նաև գեղարվեստական գրականության էջերում 1894 թ. «Իմ սիրելի որդի Գիգոր ջան: <...> Բեզ շատ կարոտով բարով են անում Ասին, Նանը, Զանին, Մոսին, Միկիչը, Գալուն, ամեն»⁶⁹) > դարձյալ հայ. Միկիչ (վկայված է 1607 թ. Մարտունու շրջանի Լիճք գյուղի Մաղկեվանքի իրար կից կանգնեցված հինգ խաչքարերից չորրորդի վրա. «<...> Ս(ուր)բ խաչս բարէխա(ւ)ս Միկիչին <...>»⁷⁰):

12) Արար. Նազար (nazar «նայվածք, հայացք» բառից⁷¹, որը հանդիպում է նաև Նադար ձևով⁷², ինչպես XIII դարում գրված է Վանի Ս. Վարդան եկեղեցում 1569 թ. վերանորոգված ավետարանի հիշատակարանում. «<...> և ղնադար սարկաւագն <...>»⁷³) > հայ. նույնպես Նազար (հիշատակված է 801 և 1261 թթ. Դերբենդից մոտ 8 կմ հարավ Պողոս-բուլաղ անունը կրող հին գերեզմանատան երկու տապանաքարերի վրա. «Նազար թ. հ. ՄՄ» և «Այս է տապան Նազարին Թ. ԶԺ»⁷⁴ (ընդ որում, հինգ ժամվա տքնաչան աշխատանքից հետո պարզվել է, որ սույն գերեզմանատանը թաղումները կատարվել են 571—1796 թթ. ընթացքում և այն էլ առանց ընդհատման՝ «անընդհատ»)⁷⁵, ինչպես նաև 1688 թ. Զուղայի գերեզմանատան խաչքարերից մեկի վրա⁷⁶, իսկ 1710 թ. Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի գերեզմանատան տապանաքարերից մեկին⁷⁷) > դարձյալ հայ. Նաբար (հիշատակված է 1715 թ. միևնույն Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի գերեզմանատան մի այլ տապանաքարի վրա. «Այս է հանգիստ <...> Նաբարին <...>»⁷⁸, ինչպես նաև 1717 թ. միևնույն Վարդենիկ գյուղի խաչքարերից մեկի վրա. «Ս(ուր)բ խաձս բարէխաւս Հաթամին՝ որդի Նաբարին <...>»⁷⁹):

13) Հայ. Թաթար (արական և միաժամանակ իգական անուն, որ ծագում է քաթար ժողովրդի անունից⁸⁰ և վկայված է 1307 թ. Սիսիանի Սյունի

64 ՀԱԱՐ, III, էջ 393:

65 Մովսէս Կազանկատուցի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Երևան, 1983, էջ 282:

66 ՀԱԱՐ, III, էջ 393:

67 Նույն տեղում:

68 Դիվան, IV, էջ 379 (№ 1527):

69 Հ. Թումանյան. Նրկերի ժողովածու. III, Երևան, 1949, էջ 47:

70 Դիվան, IV, էջ 141 (№ 569):

71 ՀԱԱՐ, IV, էջ 8:

72 Նույն տեղում, էջ 7:

73 Երուանդ Լալայան. Ցուցակ հայերեն ձևաղբայն վասպուրականի. I, Թիֆլիս, 1915, էջ 134:

74 Մ. Բարխուտարյանց. Աղվանից Լրկիր և ղրացիք. Թիֆլիս, 1893, էջ 109: Նրանք, որ Հ. Աճառյանը 801 թ. կառուցելի է համարում (ՀԱԱՐ, IV, էջ 8):

75 Մ. Բարխուտարյանց. նշվ. աշխ., էջ 108:

76 Ա. Ա. Այվազյան. Զուղա. Երևան, 1984, էջ 133 (նկ. 94):

77 Դիվան, IV, էջ 161 (№ 660):

78 Նույն տեղում, էջ 162 (№ 664):

79 Նույն տեղում, էջ 162 (№ 665): Նկատենք, որ խաչ րառի գրովյալ ժամանակ չ տառի փոխարեն հաճախ հանդիպում է ձ, ինչպես տվյալ դեպքում Ս. Գ. Բարխուտարյանը, նկատի առնելով 1717 թ. կանգնեցված սույն խաչքարի արձանագրությունը, իրավացիորեն գրում է. «Նազար անձնանվան Նաբար գրովյունը հանդիպում է մեզ առաջին անգամ այստեղ» (նույն տեղում, էջ 162):

80 ՀԱԱՐ, II, էջ 256:

վանքի բազում հայտնաբերված խաչքարի բեկորի վրա՝ «<...> եղբար իմ Թաթարին<...>»⁸¹, այնուհետև՝ Կեղամա Ս. Հովհաննու վանքում 1534 թ. գրված է Վանի Ս. Նշան եկեղեցում պահվող ավետարանի հիշատակարանում. «Դարձևալ յիշեսցիք ի մաքրափայլ և լերկնաթոշյ յաղօթս ձեր<...> և աներոցն՝ Միրաբին և ղորանիին՝ Թաթարին<...>»⁸²։ դարձյալ հայ. Թաթար (հիշատակված է Որմի «մայրաքաղաքում» 1273 թ. գրված է Վանի Ս. Սահակ եկեղեցում պահվող ավետարանի 1554 թ. գրված հիշատակարանում. «<...> բարի յիշատակ<...> հաւրն Աղաջանին և մաւրն Թարթարին<...>»⁸³, Հ. Հ. Աճառյանը, ընկառելով հավելահանդուրն Ե-ի գոյությունը տվյալ անվան մեջ, ենթադրում է, որ այս վերջին ձևը «կամ վրիպակ է», «և կամ եթև վրիպակ չէ, ծագում է» Արցախի «նշանավոր Թաթար գետի անունից»⁸⁴։

14) Երբ. Թամար (Tamar, որը որպիսի Դաւանական զոյակուն նշանակում է «արմավենի»⁸², Հնագույն վկայութիւններն ըստ Աստվածաշնչի. «Եւ առ Յուդա կին էրայ անդրանկի իւրում, որում անունն էր Թամար»⁸⁶, «<...> որ զայ Դաւթի էր քոյր մի յով գեղեցիկ տեսեամբ, եւ անուն նորա Թամար»⁸⁷)> հայ. Թամար (Գտգիկ I-ի (908—943 թթ.) կնոջ անունը. «<...> ընդ (աստուծոյ) խօսի թ(ա)ղ(ո)րն եւ Թամար թագուհին»⁸⁸, Կիւրիկի II-ի (1145—1170 թթ.) կինը, որ հիշատակվում է նրա դստեր Մարիամի՝ Հաղբատի վանքի մէջ գաղթի հուսիսային պատին արտաբուստ 1185 թ. փորագրել տված արձանագրութեան մեջ. «Ի թուին հայոց ՈՂԴ. ես Մարիամ, դուստր Կիւրիկէի արքայի <...> շինեցի զտունս աղաթիցի ի վերայ հանգստարանի մեր հաւր. բուեր իմոյ Ռուսուդանայ, եւ մաւր իմոյ Թամարայ <...>»⁸⁹, Անիի Առաքելոց կնկնեցու գաղթի 1289 թ. արձանագրութեան մեջ. «<...> Թվին ՉԼԸ <...> Թամարս, դուստր իշխանաց իշխանի<...>»⁹⁰)> վրաց. Թամար (հատկապէս Թամար (1184—1212 թթ.) թագուհին. «Թամարի ամուսին Դավիթը սս թագավոր էր» (ժամանակն իմանալով լազոտ ոչ ոք չէր ձգտէր ձգտել

«...»»⁹¹, ինչպես նաև 1187 թ. Սանահինում կանգնեցված խաչքարերից մեկի վրա. «Ի թուականութեանս Հայոց Ողջ-ին, ի թագաւորութեան Վրաց Թամարին, յամիրապասալարութեան Զքարէի եւ Իւանէի «...» որդւոց մեծին Սարգսի «...»»⁹²» հայ. Թաւմար (մեկ անգամ հիշատակւած է Վննետիկի եւ Լուսաբորիում 1488 թ. հետոյ)⁹³, Շ. Աճառյանը այս վերջին ձևի մասին գրում է. «Ժագումն ինձ անհայտ»⁹⁴.

81 *Դիպլոմ*, II, 4, 91 (№ 271).

82 *b r d w n n l w l w j w n. n2d. w2h., 52 648—649.*

42. Նույն տեղում, էջ 98.

84 ZUULP, II, t, 285,

85 նույն տեղում, էջ 266:

86. Գիրք Մենդոց, իհ, 6 և ասկուր:

87 Գիրք Բ Թագաւորութեանդ, ժԳ, 1 և այլուր:

90 Մ է սրբոգ Մարտունի անց. Հավաքումն տեղանդ կաթուղիկոսաց (Աղթամար)։
Լճախոճին, 1516, էջ 26 ե ալլուրո

Յ. Կ. Կոստանյանց. Վիմական տարեգիր. Ա.-Պետերբուրգ, 1913, էջ 36; Արձանագրության վերահրատարակության մեջ կատարված են ուղղումներ, որի համաձայն տվյալ հատվածը ստացել է այսպիսի տեսք. Ծի թուխ ճաշ(ոց) ՈՒՆԻ ևս Մարիամ դուստր Կիրիկիի արյույի <...> շինեցի զտոմս աղաթից ի վերայ հանգստարանացս մեր հալոթեր իմոյ Ռուսթրանու և մար իմոյ՝ Թամարայ <...>» (Կ. Գ. Ղաֆադարյան. Հաղորատ. շարտարարական կառուցվածքը և վիմական տրծանագրությունները. Երևան, 1963, էջ 157, № 24, գծագիր՝ էջ 120, լուսանկար՝ էջ 158)։

90 *Ṭḥq* 1, 1, 22 (M 71).

91 КЦ, I, с. 369.

92 Կ. Կ ռ ս տ ա ն չ ա ն Կ. Վիմախան տարեգիր, 19 41:

32000, 11, 1, 286,

4 វិញ្ញាណ ជាតិពុទ្ធសាសនា

15) Եբր. Մշեհ (Mšeh) > հուն. Մոսէս (Μωσής) > հայ. Մովսէս⁹⁵ («<...>»
 եւ անուանեաց զանուն նորա Մովսէս <...>⁹⁶, որը հայերի մոտ որպէս
 անձնանուն գործածվել է IV դարից սկսած⁹⁷ Տրդատ III-ի (293—330 թթ.) և
 Գրիգոր Լուսավորչի (301—325 թթ.) օրոք. «Եւ զոմանս յորդուց քրմացն
 առեալ <...> եպիսկոպոսութեան լինէին արժանի <...>, շորորդն՝ Մով-
 սէս»⁹⁸, «<...> այր մի տարօնացի Մովսէս անուն»⁹⁹) > դարձյալ հայ.
 Մուսա (ծագում է արարական շրջանի Mūsa ձևից)¹⁰⁰, որը վկայված է ինչպես հա-
 յերեն ձեռագրերում (Արճեշում 1450 թ. գրված և Թավրիզի հայաբնակ ի-
 լավա թաղի Ս. Սարգիս եկեղեցում պահպանվող ավետարանի անթվական մի
 հիշատակարանում. «<...> եւ Մուսային. այլ եւ դստերն <...>»¹⁰¹,
 այնպես էլ հայկական վիճագրերում (Մարտակերտի շրջանի Քուլատակ գյուղի
 Ս. Հակոբա վանքի սրահի հարավային պատի արևմտյան մասում 1261 թ.
 գրված արձանագրության մեջ. «Ես՝ Մուսէս, միաբանեցա Ս(ուր)բ նշանի(ս)
 ընծաիւք <...>»¹⁰², Սիսիանի շրջանի Բունկոթ գյուղի մոտակայքի քանդ-
 ված եկեղեցու քարերից մեկի 1787 թ. գրված ընդարձակ արձանագրության
 մեջ. «<...> Սլի որդի Մկրտչին, Մուսին <...>»¹⁰³) > դարձյալ հայ.
 Մուսա (հիշատակված է 1566 թ. Մարտունու շրջանի Վաղաշեն գյուղի գե-
 րեզմանատան տապանաքարերից մեկի վրա. «Ես Սալս <...> թոռ մեծ
 Մուրսալին <...>»¹⁰⁴),

16) Հայ. Բուսա (հավանաբար ծագում է պարսկերեն būsa «համբույր»
 բառից¹⁰⁵ և վկայված է Ազիզբեկովի շրջանի Հերհեր գյուղի Սպիտակավոր
 Աստվածածին վանքին այգու նվիրատվության վերաբերյալ 1340 թ. արձա-
 նագրության մեջ. «<...> ես՝ Բուսէս <...>»¹⁰⁶, ինչպես նաև Փոքր Հայքի
 Դիվրիգ քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրերից մեկի 1466 թ. գր-
 ված հիշատակարանում. «<...> յիշեցէք զՍալշուկ խաթունն և զայրն իւր
 ըզ Զանի բէկն և զաւակսն իւրեանց <...> Մկրտչին, Բուսէն <...>»¹⁰⁷) >

⁹⁵ ՀԱԱԲ, III, էջ 419:

⁹⁶ Գրք ելից, Բ, 10: Խոսքը Մովսէս մարգարեի մասին է:

⁹⁷ Հ. Աճառյանը սխալմամբ կարծում է, որ Մովսէս անունը հայերի մոտ գործածվել է II դարից սկսած (ՀԱԱԲ, III, էջ 420):

⁹⁸ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1909, էջ 441—442:

⁹⁹ Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Ր Ե Լ Լ ա ն, էջ 23:

¹⁰⁰ ՀԱԱԲ, III, էջ 465:

¹⁰¹ Հ. Յ. Աճառեան. Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի. Վիեննա, 1910, էջ 67 ր:

¹⁰² Դիվան, V, էջ 16 (№ 13): Փակագծերում Լեղած հավելումները կատարված են մեր կողմից:

¹⁰³ Դիվան, II, էջ 125 (№ 374): Տվյալ դեպքում «Սլի որդի» կապակցությունը, մեր կար-
 ծիքով, նշանակելու է «Ս(ա)լի որդի», այսինքն՝ անձնանունը անհրաժեշտ է դիտել որպէս Սալ-
 ճիշտ այնպես, ինչպես այն տրված է հաջորդ օրինակի մեջ. «Ես Սալսա: Կարելի է ենթադրել,
 որ տվյալ Սալ անձնանունը ծագում է ավելի հին Սաճլ անձնանունից, որը բխեցվում է արար-
 sahլ «Երեսի միսը մի քիչ նիհար մարգ» բառից, ինչը համարվել է գեղեցկության նշան
 (ՀԱԱԲ, IV, էջ 374), և հայ պատմագրության մեջ առաջին անգամ վկայված է 821 թ. դեպ-
 քերի կապակցությամբ. «<...> արի և շքեղատեսակն Սահլի Սմբատեան Եռանշահին
 <...>» (Մովսէս Կաղանկատվացի, էջ 326), ինչպես նաև 837 թ. «<...> Սահլի
 Սմբատեան ձերբակալ արարեալ զապստամբն Բարան՝ զմարդախողխող, աշխարհաւեր, արիւ-
 նարու գազանն <...>» (նույն տեղում, էջ 330):

¹⁰⁴ Դիվան, IV, էջ 180 (№ 743):

¹⁰⁵ ՀԱԱԲ, I, էջ 424: Հ. Աճառյանը այս կարծիքը, փաստորեն, առաջ է քաշել այն ժխ-
 տելու համար, միաժամանակ ենթադրելով, որ Բուսա ձևը ծագում է Բուսա անձնանունից՝ Ե-ի
 անկումով, իսկ այս վերջինս՝ Փոքր Ասիայի Բուսոս քաղաքի անունից, որը 1326 թ. դառնում
 է օսմանյան նորակազմ պետության մայրաքաղաքը (նույն տեղում):

¹⁰⁶ Ղ. Մ. Ալիշան. Միսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի. Վենետիկ, 1893,
 էջ 139:

¹⁰⁷ Գ. Սրվանձատյանց. Թորոս աղբար. I, Կ. Պոլիս, 1879, էջ 232:

դարձյալ նայ. Բուրսա (վկայված է անհայտ վայրում 1448 թ. գրված և իմ անուպատում պահվող ավետարանի նույն թվականը կրող հիշատակարանում. «...» Աստուած ողորմի <...» դստերց նորա՝ նարին խաթունի(ն) և Բուրսա խաթունի(ն) <...»¹⁰⁸, ինչպես նաև ուշ շրջանի հայ պատմագրության մեջ՝ 1687 թ., Չարարիա Քանաքեռցու (1627—1699 թթ.) մոտ. «Իսկ Ղապօ յարի առ աւագն ղեղջին, և նա ամուսնացուցանէ զնա ընդ աղախին իւր Բուրսա անուն <...»¹⁰⁹, որը վկայված է նաև թեք հոլովներով, ինչպես Խարերդի ձեռագրերից մեկի վերահիշյալ 1466 թ. գրված հիշատակարանում, ընդ որում, թեք ձեռագրերը տարբեր, սակայն հիշատակարանները գրված են միևնույն անձնավորության կողմից միևնույն բովանդակությամբ, որոնք սակայն ունեն մեծ տարբերություններ, անգամ այստեղ տրվող հակիրճ մեջբերումներում, ինչպես. «ե»—«եւ», «զաւակսն»—«զգաւակսն», «ըզ Ջանի բէկն»—«ըջանի բէկն». «<...» յիշեցէք զՍալշուկ խաթունն եւ զայր իւր զՋանիբէկն եւ զղաւակսն իւրեանց <...» Մկրտիչն, Բուրսէն <...»¹¹⁰, ինչպես նաև Բերկրիում 1473 թ. գրված և Վանի Պողոս-Պետրոս եկեղեցում պահվող ավետարանի միևնույն թվականին գրված հիշատակարանում. «Դարձեալ աղաչեմ յիշել <...» և զՄարգարիտն և զԲուրսէն <...»¹¹¹, կեցնա եկեղեցում 1619 թ. գրված և Վանի Պողոս-Պետրոս եկեղեցում պահվող ավետարանի 1621 թ. գրված հիշատակարանում. «<...» յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձևը <...» զԳստեր(ս)ն <...» և զԲուրսէն և զնշխուն(ն) <...»¹¹²;

17) Թուրք. (վկայված արաբերենով)՝ Բուղա (թուրքական ծագումով արաբ զորավար Մուտավաքի խալիֆի (847—861 թթ.) օրոք. «Երբ Մուտավաքիյը Բուղային ուղարկեց Թիֆլիսի դեմ <...»¹¹³. (վկայված հայերենով)՝ Բուղայ («Եւ զօրագլուխ կացուցանէ նոցա զայր մի Բուղայ անուն, ազգաւ թուրք»¹¹⁴, «<...» և առաքեաց զօրագլուխ մի՝ Բուղայ անուն, թուրք ազգաւ, այր խորամանկ և անօրէն. որ եկեալ աւերեաց զաշխարհս Հայոց»¹¹⁵, «Եւ Սմբատ սպարապետն իւրովի գնաց առ Բուղայ»¹¹⁶, կամ համանուն մի այլ անձնավորություն (թաթար հարկահան), որ հիշատակվում է 1254 թ. Արցախում կատարված դեպքերի կապակցությամբ. «Եւ իբրև գիտաց Բուղայն՝ թէ յայտնի է նմա նենգութիւն նորա, խօսեցաւ ընդ նմա ի խաղաղութիւն»¹¹⁷, կամ մեկ այլ համանուն անձնավորություն Մուզանի դաշտում 1289 թ. կատարված դեպքերի կապակցությամբ. «Յայսմ ժամանակի երկպառակեցան զօրքն զան Արղունին, և անկաւ շփոթումն մեծ ի մէջ մեծամեծացն ղխաւորաց, հանին բաղում արեան ճապաղիս, զի կալաւ Արղունն զմեծ զօրապետն զԲուղայ շինքսանն»¹¹⁸, որը վկայված է նաև գեղարվեստական դրականության էջերում՝ «Նորին Ֆրկանն ասացեալ վասն Արզուն զանին և Բուղային» բանաստեղծության մեջ¹¹⁹)՝ դարձյալ թուրք. (վկայված հայերենով)՝ Բուրղա (հիշատակված է Նղեգնաձորի շրջանի Յախացքար

108 Երվանդ Լույսան. Նշվ. աշխ., էջ 402: Փակագծերում նշված և տառը ավելացրել ենք ստորեկ կրկնվող համապատասխան հասկածի հիման վրա (նույն տեղում, էջ 404):

109 Գաբարեայ սարկաւազի Պատմութիւն, 111, Վաղարշապատ, 1970, էջ 43:

110 Գ. Սրվանձատյանց. Թորոս աղբար, 11, Կ. Պոլիս, 1884, էջ 337:

111 Երվանդ Լույսան. Նշվ. աշխ., էջ 467:

112 Նույն տեղում, էջ 860: Վերջին փակագծում նշված և տառը ավելացրել ենք բոլոր անհրաժեշտությունները:

113 Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կաղմեց Հ. Թ. Նուրադյան. Երևան, 1965, էջ 88:

114 Թուման Արծրունի, էջ 126:

115 Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց. Երևան, 1961, էջ 78:

116 Ստեփաննոս Օրբելյան, էջ 170:

117 Կիրակոս Գանձակեցի, էջ 314:

118 Ստեփաննոս Օրբելյան, էջ 430:

119 Ֆրիկ. Բանաստեղծություններ. Երևան, 1941, էջ 209—215:

վանքի Ս. Հովհաննես եկեղեցու միջանցքի հյուսիսային պատի 1367 թ. փորագրված արձանագրության մեջ. «Բուրդա թուրքին պարսքն տվին»¹²⁰:

18) Հայ. Հաւան (Հայաստանի պատմության ավանդական շրջանի արքաներից. «<...> Հաւան, Զարմայր <...>»¹²¹, որը հիշատակվում է նաև ավելի հին աղբյուրներում, սակայն նվազական -ալ մասնիկով. «<...> Հաւանակ <...> Զարմայր <...>»¹²²) > դարձյալ հայ. Հաւան (հիշատակված է Մարտունու շրջանի Զուլաբար գյուղի գերեզմանատան 1718 թ. տապանաքարերից մեկի վրա. «<...> որդի Հարվանին <...>»¹²³:

19) Ճեն. (վկայված հայերենով)՝ Կոնակ (Մամիկոնյան նախարարական տան նախնիներից, որոնք ավանդության համաձայն վերաբնակվեցին Տարոնում և որտեղ ստեղծվեց Բագրատյան յոթ, և եղեն յազգ մեծ ի Մամիկայ և ի Կոնակայ»¹²⁴) > հայ. Կոնակ (հիշատակված է Եփրատի ափերին պարսիկների և հռոմեացիների ընդհարման կապակցությամբ, որին մասնակցում էր նաև Տրդատ III-ը (293—330 թթ.), երբ Հռոմի կայսեր որդին «ի վերայ Կոնակայ շոգաւ յանապատ, ընդ որում նաև Տրդատ»¹²⁵, որտեղ Կոնակը Հ. Աճառյանի կարծիքով հիշվում է Քայնպիսի ձևով, որ չի իմացվում. թե ո՞վ է»¹²⁶, բայց որը այլուր Եփրատի ափերին կատարված նույն դեպքերի կապակցությամբ հիշվում է որպես խոսքով II-ի (279—287 թթ.) սպարապետ. «Անտի աճապարեալ ընդդէմ նորա ելանէ Կոնակ սպարապետ Մեծին խոսքովու հարն Տրդատայ»¹²⁷, որը հանդիպում է նաև Եսայանի և Կոնակի ձևով. «Կոնակ սպարապետ Մեծին խոսքովայ հօր Տրդատայ»¹²⁸, Անհրաժեշտ է նշել, որ այստեղ հիշված Կոնակը (որի անունը ծագում է Մամիկ և Կոնակ գույգից և որը՝ այդ գույգը, այլուր հանդիպում է միայն Մամգուն անվան տակ¹²⁹) չպետք է շփոթել այն Կոնակի հետ, որի անունը հանդիպում է Հայաստանի պատմության ավանդական շրջանին վերաբերող արքայացանկերում¹³⁰):

20) Պարսկ. (վկայված հայերենով)՝ Վաշիր (Պարսից խոսքով II (590—628 թթ.) արքայի քեռորդի Միհրան գորավարի կուսակալը Տուրուբհրանի Ապահունիք գավառում, որին սպանեց Գայլ Վահանը. «Բերե ետա զնա Վահան, և ասէ. Վաշիր, զի՞նչ եղիք ի մտի. ի պարսիկ հաւատ կամէիք դարձուցանել զերկիրս Հայոց: <...> և զՎաշիր գանեաց սաստիկ. հինչև

¹²⁰ Դիվան հայ վիմագրության, III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 145 (№ 438):

¹²¹ Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանաւ. Վենետիկ. 1862, էջ 15:

¹²² Մ յ Վ ս Լ ս խ ո Ր Ե ն ա ճ ի, էջ 62:

¹²³ Դիվան, IV, էջ 196 (№ 810): Միջնադարյան և ուշ շրջանի վիմագիր արձանագրություններում և տառի փոխարենն Վ զրէլը սովորական երևույթ է. ինչպես տվյալ անվան դրություն մեջ:

¹²⁴ Պատմութիւն Սևրևոսի. Երևան, 1979, էջ 57:

¹²⁵ Մ յ Վ ս Լ ս խ ո Ր Ե ն ա ճ ի, էջ 219:

¹²⁶ ՀԱԱՐ, II, էջ 647: Անհրաժեշտ էնք համարում նշել, որ Հ. Աճառյանի սույն կտրծիրը այնքան էլ ճիշտ չէ: Այսպես, Լիւն Հռոմի կայսեր որդին հարձակվում է Կոնակի վրա («ի վերայ Կոնակայ շոգաւ յանապատ»), և եթէ նույն բանը կատարում է նաև Տրդատ III-ը (որն ուրում նաև Տրդատ), որն այստեղ հռոմեացիների դաշնակիցն էր և պարսիկների թշնամին, ապա պարզ է, որ Կոնակը պարսից Վարահրան II-ի (276—293 թթ.) սպարապետն էր, մի հանգամանք, որը հակասում է հաջորդ փաստարկի տվյալներին, ըստ որոնց Կոնակը հայոց արքա խոսքով II-ի սպարապետն էր:

¹²⁷ Ս Ե Ր Ե Ն Ս, էջ 58:

¹²⁸ Ս ա մ վ Ե Լ Ա ն Լ ճ ի, էջ 62:

¹²⁹ Մ յ Վ ս Լ ս խ ո Ր Ե ն ա ճ ի, էջ 222 (ծան. 3, 5, 10, 14), 223 (ծան. 11), 227 (ծան. 12), 228 (ծան. 12, 14):

¹³⁰ Նույն տեղում, էջ 69:

էառ րանից նշան պզորսն կոշելոյ»¹³¹) > հայ. Վարչիր (վկայված է եղիվարդի Ս. Թեոդորոս կամ Ս. Զորավար մենաստանի 1191 թ. արձանագրության մեջ. «Այս արձանագիր է Արտաշիրի՝ որդի Վարչրա <...>»¹³²):

21. Պարսի. Վասակ (վկայված հունարենով՝ Օսակէս ('Οσάκης)¹³³, որը Արտավազդ II-ի (55—34 թթ. մ. թ. ա.) քրոջ ամուսնու՝ Պարսից թագաժառանգ Բակուրի դորավարն էր հռոմեացիների դեմ մղվող պատերազմում. վկայված լատիներենով՝ Վասակես ('vasaces)¹³⁴, որը Պարսից Վաղարշ I-ի (51—75 թթ.) դստավարն էր նույն հռոմեացիների դեմ մղված պատերազմում, որի հետևանքով Տրդատ I-ը (63—88 թթ.) ներոնի (54—68 թթ.) կողմից ճանաչվեց Հայաստանի արքա) > հայ. (վկայված հունարենով՝ Վասակէս ('Οσάκης)¹³⁵, որը ալանների դեմ մղված պատերազմում Արրիանոսի հայ առաջնորդներից էր Հաղրիանոսի (117—138 թթ.) ժամանակ. Բասսակէս ('Βασσακης)¹³⁶, որը Հովհաննես Արշակունու փեսան էր և 539 թ. գլխավորել է հայ նախարարների պատգամավորությունը Պարսից խոսրով I Անուշիրվանի (531—579 թթ.) մոտ. Բասսակիոս ('Βασσακιος)¹³⁷. Թեոփիլոս (829—842 թթ.) կայսեր՝ Ժամանակ. վկայված հայերենով՝ Վասակ ('Ապա գայր հասանէր <...> Վասակ Մամիկոնեան սպարապետն Հայոց երկուտասան ռիւրուք»¹³⁸, որը հիմնականում գործում էր Արշակ II-ի (350—368 թթ.) օրոք. Քիսկ ղգունդն երրորդ տային ի ձեռս Վասակայ իշխանին Սիւնեաց»¹³⁹, որը Հագկերա II-ի (439—457 թթ.) կողմից նշանակված էր Հայաստանի մարզպան և որը 451 թ. մայիսի 26-ին Ավարայրի ճակատամարտում լքեց Վարդան Մամիկոնյանին և դավաճանի անուն վաստակեց, մի անուն, որը բազմիցս հիշատակվում է՝ նաեւ վիմագիր արձանագրություններում, ինչպես՝ Անիի Մայր

1. Յովհաննու Մամիկոնեի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ. Վենետիկ, 1889, էջ 28: Մասնագիտական գրականություն մեջ հայկական աղբյուրների մատենաշաժ Վաչիր անվան փոխարեն՝ Վաչատկում է Վարչիր (Warsir) ձևը (F. Justi, S. 357), որի մասին, սակայն, Հ. Աճառյանի մոտ ոչինչ չի նշված: Եթե իրանական Վարչիր անունը հայերենում նախ տրված է Վաչիր անով, իսկ ուղիղ նորից Վարչիր, ապա զա նշանակում է, որ սկզբում կատարվել է Բ-ի անկում, որը նույնպես օրինաչափ է հայերենի համար (ինչպես. խեթ. 'Muršil > հայ. *Մուրշիկ > Մուրշիկ), իսկ ապա նորից հանդես է եկել հավելանշյուն Բ-ն՝ Վաչիր > Վարչիր:

132 Դ. Ալիշան. Այրարատ րեալիսարհ Հայաստանեայց. Վենետիկ, 1890, էջ 199: Հ. Աճառյանի մոտ Վարչիր անձնանվան հիշատակման ժամանակը՝ 1191 թ., սխալմամբ (թերևս սոպագրոսիան վրիպակով) տրված է 1911 թ. (ՀԱԱԲ, V, էջ 117):

133 Dio Cass., RII, XL, 28, 3, XL, 29, 3 և այլուց մոտ: Տվյալ Օսակէս (իմա՝ Վասակէս) ձևը, փաստորեն յα/ο (վա/α) համապատասխանությունն արտահայտությունն է հունարենում, ինչը հանդիպում է նաև այլ դեպքերում, ինչպես. 'Ορδανης (Arrian. Anab., VI, 27, 3), կամ Որդան ('Դիվան, IV, էջ 381, № 1538, Վարդենիսի չրջանի Մովակ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու մուտքի բարավորի վրա՝ ներքուստ), որը երկու դեպքում էլ տրված է Վարդան անվան փոխարեն (F. Justi, S. 233, 351, 'Դիվան, IV, էջ 381). 'Ορδανης (F. Justi, S. 236) այսինքն՝ Վարթանէս > վ(ր)րթանէս (ա-ի հազվագեպ, սակայն օրինաչափ հնչյունափոխությունը. կամ անկումով, ինչպես՝ անկանեւ-ընկնել, ասել-րսել, անել-ընել, ինչպես նաև՝ կաղարջը-ի(ր)ղարջը, Բաղնայր-Բ(ը)ղներ), ինչը նկատելի է նաև վրացերենում՝ վ(ա)րթանէս—Ortane (Օրտանե), վախճան—oxcan (Օքսոն) (ՀԱԱԲ, V, էջ 128), թեև կա նաև հակառակ երևույթը՝ οίνα (ո/վա), վկայված Որգնաւ-Վարդնաւ տեղանվան մեջ, որն ալիւլի լայն տարածում ունի հայերենի բարբառներում:

134 Tacit., Annales, XV, 14.

135 F. Justi, S. 357 (հղված է՝ Arrian, Ac. c. Alan, 12, որին մենք ծանոթ չենք):

136 Procop., Opera omnia, II, 3, 29—31, II, 21, 34.

137 Const. Porph., Adm. Imp., 50. (139, 142, 143, 148).

138 Փալստոս Բուզանդ, էջ 153, ինչպես նաև այլ պատմիչների մոտ:

139 Ն. Դիշե, էջ 74 և այլուր:

տաճարի հարավային պատի արևմտյան անկյունում՝ արտաքուստ, Գագիկ I-ի (990—1020 թթ.) կնոջ՝ Կատրանիդե թագուհու 1001 թ. փորագրելովոված արձանագրության մեջ. «<...> ես Կատրանիդե Հայոց թագուհի, դուստր Վասակա Սինեաց թագաւորի <...>»¹⁴⁰։ Մարտունու շրջանի Սելիմի լեռնանցքի մոտակայքի Մարտունու գոմեր կողմով ներկայիս ավերակներում 1220 թ. կանգնեցված, սակայն այժմ անհետացած մի խաչքարի վրա. «<...> ի յիշխանութիւնն Վասակայ»¹⁴¹։ Մարտունու շրջանի այժմ անմարդարևակ Փառականք գյուղի եկեղեցամերձ գերեզմանատան 1547 թ. կանգնեցված խաչքարի վրա. «[Ս(ուր)բ խաչս բ]արեխաւս Վասակա ք(ա)հ(ան)-ային <...>»¹⁴² և այլն)» դարձյալ հայ. Վառսակ (հիշատակված է Կամոյի շրջանի նորատու գյուղի գերեզմանատան երեք քարերից բաղկացած պատվանդանին կանգնեցված հինգ խաչքարերից մեկի՝ երրորդի վրա 1601 թ. գրված արձանագրության մեջ. «Ս(ուր)բ խաչս բարեխաւս) կա(ն)կ(նեցաւ) Վարսա(կին)» <եւ> շ(էմ) ա(ր)ժ(ա)ն. թվ. ՈԾ»¹⁴³։

22) Խաւր. Ջիովաննի (Giovanini «Յովհաննէս»)՝ հայ. *Ջիովան (վկայված է որպէս Ջիւան)¹⁴⁵ դարձյալ հայ. Ջիուովան (հիշատակված է Սիսիանի շրջանի Բոնակոթ գյուղի 1704 թ. կառուցված Ս. Գևորգ եկեղեցու հարավ-արևելյան մուկթի հարավային երեսին 1787 թ. փորագրված լինդարձակ արձանագրության մեջ. «Բունեթի որդի Ջիուովան»¹⁴⁶։

23) Հայ. Սադուն (անհայտ ծագմամբ անձնանունը, որը առաջին անգամ հիշատակվում է 1161 թ. դեպքերի կապակցությամբ, երբ վրաց Գևորգի III (1156—1184 թթ.) արքան, գրավելով Անին, Սադուն Արծրունուն նշանակում է քաղաքի կառավարիչ. «Նւ թողոյր ի յԱնի զՍադուն իշխան, յորոյ վերայ կարծիք ապստամբութեան եղեն ի սրտացաւութեամբ ամրացուցանելն զպարխապ քաղաքին, զոր իմացեալ թագաւորն՝ ընկենու զնա ի պատուողն <...>»¹⁴⁸) դարձյալ հայ. *Սադուն>*Սադուն>Սադուն (հիշատակված է Շամշադինի շրջանի Վարագավան գյուղից բավական վերև՝ Սադ-

¹⁴⁰ Դիվան, I, էջ 35 (№ 101)։

¹⁴¹ Դիվան, IV, էջ 213 (№ 897)։

¹⁴² Նույն տեղում, էջ 255 (№ 1071)։

¹⁴³ Նույն տեղում, էջ 35 (№ 105)։ Ս. Գ. Բարխուդարյանը արձանագրության սկզբի հատվածի վերծանում է այսպես. «Ս(ուր)բ խաչս բարեխաւս) կա(ն)կ(նեցաւ) Վարսանկան. թվ. ՈԾ (1601)» և ծանոթագրում. «Անձնանունը կասկածելի է. տե՛ս գծագրությունը» (նույն տեղում, էջ 35)։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Վառսանկան ձևի մեջ առաջին և տառը իրականում չ է, իսկ կ տառ բոլորովին չկա։ Այնպես որ, թվում է, թե ստացվում է «Վառսա չ ան»։ Ոսկայն արձանագրության լուսանկարի վրա (նույն տեղում, տախտակ XIII, լուսանկար 36) շատ պարզ երևում է, որ վերջին ան հատվածի ա-ն փակագիր աս է, ճիշտ այնպես, ինչպես այն հանդիպում է Վաղարշի վանքի Ս. Կարապետ եկեղեցու հարավային կողմում գտնված փրվածքի զինաքարերից մեկի անթվական արձանագրության մեջ. «ը բաժնէ զմինն» (Դիվան, II, էջ 104, № 303, տախտակ XXVII, նկար 124)։ Հետևաբար, խնդրո առարկա հատվածի ենթադրյալ ան տառախումբը վերծանվում է որպես ան, իսկ ավելի ճիշտ՝ ա(ր)ժ(ա)ն։ Այնուհետև, և թե նկատի ունենանք Կամոյի շրջանի Գանձակ (այժմ Բատիկյան) գյուղի Ս. Գևորգ եկեղեցու մուտքի մոտ 1549—1555 թթ. միջև կանգնեցված մեծ ու գեղեցիկ խաչքարի արձանագրության «<...> շինել տվի խաչս որդոյ իմոյ Սելիմին <...>» եւ շ(էմ) ա(ր)ժան» (Դիվան, IV, էջ 85, № 324) արտահայտությունը, ապա խնդրո առարկա հատվածը կարող ենք վերծանել միայն այնպես, ինչպես ներկայացվեց վերևում. «<եւ> շ(էմ) ա(ր)ժ(ա)ն»։ Հետևաբար, «Վարսա» բնագրի անձնանունը ևս հնչողությամբ վերծանվում է որպես «Վարսա(կին)», ինչպես այն ներկայացվեց իր տեղում։

¹⁴⁴ ՀԱԱՐ, III, էջ 537, IV, էջ 302։

¹⁴⁵ ՀԱԱՐ, IV, էջ 302։

¹⁴⁶ Դիվան, II, էջ 125 (№ 374)։ Այստեղ ընդգրկի Ռաբենար անձնանունը, հավանաբար վրդպակով, ապագրված է Ռունիար։

¹⁴⁷ ՀԱԱՐ, IV, էջ 339։

¹⁴⁸ Մեծին Վարդանայ Բարձրերդեցու Պատմութիւն տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 166։

կազման գլուղի մոտ գտնվող Շխմուրադ վանքի դավթի արևելյան կողմի խորանի նակատակալ քարի վրա 1181 թ. արձանագրության մեջ. «<...> նստէր Գրիգոր շինեցի խորանիկս աստուածարնակ հրամանաւ Սաղոսնո մեծի իշխանի <...>»¹⁴⁹։

24) Հին պարսկ. Բագադատա (*Bagadata)¹⁵⁰, որը նշանակում է «(Միհր) աստծու տվածը կամ ստեղծածը»¹⁵¹. (վկայված աքադերենով)՝ Բագադատա (IPagadatta)¹⁵², որը Ուրմիա լճից հարավ-արևելք գտնվող Ուիշդիշ երկրի տիրակալն էր Ռուսա I-ի (735—713 թթ. մ. թ. ա.) և Սարգոն II-ի (721—705 թթ. մ. թ. ա.) ժամանակ հայ. (վկայված հունարենով)՝ Մագադատէս (Μαγδαττης)¹⁵³, իմա Բագադատէս (*Baxdāt-¹⁵⁴), որը Տիգրան II-ի (95—55 թթ. մ. թ. ա.) կողմից նշանակվել էր Ասորիքի կուսակալ՝ դարձվալ հայ. Բադարատ («<...> Շամբատալ Բադարատ<...>» և որ ի նման է ծնեալ ազգ՝ լինել կոչմամբ լանուն նորա Բագադատունի»¹⁵⁵, ընդ որում, դրան հնչյունափոխություն էր, որը սովորական է պարսկերենից հայերենին անցած ուլլ բառերի ես. ինչպես. հին պարսկ. *Spantadāta>ավեստ. Spentadōdāta>հայ. Սպանդարատ¹⁵⁶, հին պարսկ. apadana «գլխակ, պալատ, սպարանք»>հայ. սպարանք «մեծ տուն կամ պալատ, իշխանական տուն»։ միջին պարսկ. apadat «անիրավ, անարդար»>հայ. ապիրատ «անօրին, անարդար, անիրավ»¹⁵⁷ և այլն)>դարձվալ հայ. Բադրատ (երկրորդ անգամ անվանումով, որը նույն ձևով փոխանցվել է ալլ լեզուների)¹⁵⁸>վրաց. Բադրատ (ბადრატ). «<...> մեկի անունը Մուշել (=Մուշեղ) էր, իսկ մյուսինը՝ Բադրատ, որը Բադրատունիանների (=Բադրատունիների) հայրն էր <...>» («<...> ցրտես Նախեղ Նրջա Զեթեղ, ըս ցրտես Զեթրատ, Ռոմեղ Զրս Զամա Զեթրատունոնոնո<...>»¹⁵⁹>հայ. Բարդրատ (հիշատակված է վրաց Բադրատ III-ի (978—1014 թթ.) ժամանակաշրջանի Ատենիի Ս. Սիոն եկեղեցու

149 Մ ա կ ա Ր Բ ա Ր խ ու տ ա Ր յ ա ն ց. Արցախ. Բագու, 1695, էջ 335, Այս միևնույն անձնավորությունը Իջևանի շրջանի Մակարավանքի խաչքարերից մեկի բեկորների վրա, ինչպիսիք են գլխավոր եկեղեցու արևմտյան պատի մուտքից աջ՝ արտաքուստ, արձանագրության մեջ հիշվում է որպես Սաղոսն (Գիվան, VI, էջ 159 (№ 279), 165 (№ 286), Հայերենի Սաղոսն անձնանունը թերևս կարելի է բխեցնել Ռուսա I-ի (735—713 թթ. մ. թ. ա.) ուրարտական նահանգապետներից մեկի՝ Սեթինուի (*Setinu) անունից, որը հիշատակվում է Սարգոն II-ին (721—705 թթ. մ. թ. ա.) ուղղված ասորեստանյան հետախուզական նամակներում (ABINU, № 50, նամակ 3 և 4), Լթև նկատի ունենալով, որ Սաղոսն անձնանունը հանդիպում է ոչ միայն դ-ով, այլ նաև ք-ով (ՀԱԱՐ, IV, էջ 341), Ուստի՝ *Setinu> Սաթուն||Սադուն՝ «(Օ. Օ. Կարաբեյա. Локализация урартского царского города Арцашкун. — «Լրարեր հասարակական գիտություններ», 1976, № 5, էջ 69—73) և լ>ու (Հ. Հ. Կարաբեյա. Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները..., էջ 57—58) անցումներով, որոնք հատուկ են ուրարտա-հայկական դուզահոսներին։

¹⁵⁰ F. Justi, S. 57.

¹⁵¹ ՀԱԱՐ, I, էջ 355.

¹⁵² ABINU, № 46, стр. 52 сл.

¹⁵³ Applan, RH, XI, 48.

¹⁵⁴ F. Justi, S. 57.

¹⁵⁵ Մ ո վ ս ե ս Լ ո Ր Ե ն ա ց ի, էջ 104—105.

¹⁵⁶ ՀԱԱՐ, IV, էջ 597.

¹⁵⁷ ՀԱՐ, I, էջ 230, 235.

¹⁵⁸ ՀԱԱՐ, I, էջ 355.

¹⁵⁹ KU, I, c. 374.

արեւմտյան ճակատի կենտրոնական ելուստի վրա 982—986 թթ. միջև ունի Գերջիում Երհասանա որդու գրած արձանագրության մեջ. «<...> Այն տարին, որ Բարգրատ Ափխազաց թագաւորն <...>. եւ գալ լալմ Ոփլիցիսէ կալաւ <...>»¹⁶⁰։

25) Երբ. Հաբել (Habel)¹⁶¹ հուն. Արեւլ ('Αρεβί)¹⁶² հայ. Արէլ կամ Հաբէլ («<...> եւ հայեցաւ Աստուած ի Հաբէլ եւ ի պատարագս նորա»¹⁶³, վաղարշակ արքան «կարգէ <...> զԱրէլ սպասարար եւ գահարար»¹⁶⁴, «<...> ե հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երէց ունի ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Արէլ»¹⁶⁵, որը հիշատակվում է Սմբատ Բագրատունու՝ Վրկանում մարզպան եղած ժամանակ Պարսից Խոսրով II Փարվեզի (591—628 թթ.) օրոք)՝ դարձյալ հայ. (վկայված հունարենով)՝ Արէլոս ('Αρεβίλος)¹⁶⁶. որը արևանների դեմ մղված պատերազմում Արրիանոսի հայ առաջնորդներից էր Հադրիանոսի (117—138 թթ.) ժամանակ¹⁶⁷։

26) Հայ. Մանան (մանաւայ «գազպեն» բառից կազմված իգական Մանաւայ անվան կրճատ գրութայն ձևն է)¹⁶⁸, որը վկայված է հայերեն ձևով. գրերում (ինչպես՝ 1373 թ. Ամիդում ընդօրինակված ե Վենետիկի մատենադարանում պահվող ավետարանի միևնույն տարում գրված հիշատակարանում. «<...> և միջնորդութեամբ կենարար հրաշիւք սուրբ պատարագին իշխեսիք <...> Մանանին <...>»¹⁶⁹, 1477 թ. անժանոթ վայրում գր-

¹⁶⁰ П. М. Мурадян. Армянская эпиграфика Грузии. Картли и Кахети. Ереван, 1985, с. 107. Պ. Մ. Մուրադյանի ներկայացրած վերծանման մեջ որոշ կարևոր ուղղումներ է կատարել Հ. Մ. Բարթիկյանը (Р. М. Бартикян. Мнимое упоминание «картлинской царницы» в армянской надписи из Атенского Спона.—«Երևանի հասարակական գիտությունների», 1986, № 2, էջ 75—80), սակայն բնագրի հստակ ընթերցվող Ոփլիցիսէ (իմա՝ Ուփլիցիսիս) տեղանունը նա վերծանում է որպես Ոփլիսցիսէ (նույն տեղում, էջ 75, 78—80). որը ԼՔԸ տպագրական պատահական վրիպակ չէ, ապա բնագրի մեջ ուղղումներ մտցնելու անհրաժեշտություն է, մանավանդ որ բոլոր Պ. Մ. Մուրադյանի, Գերջիումի տվյալ զեկարում անձնանուններն ու տեղանունները գրավոր կերպով ներկայացրել է այնպես, ինչպես գրանք ինքն արտասանել է (П. М. Мурадян. Указ. соч., с. 108)։

¹⁶¹ ՀԱԱՐ, I, էջ 17։

¹⁶² Gen., IV, 1 և այլուր։

¹⁶³ Գիրք ծննդոց, Դ, 4, Խոսրը Ադամի Էրկու որդիներից Էրկորդի՝ Արիլի մասին է։

¹⁶⁴ Մովսես Խորենացի, էջ 110։ Հ. Աճառյանի կարծիքով Արէլ անունը հայերի կողմից կարող է ընդունված լինել միայն քրիստոնեության մուտքից հետո, իսկ մ. թ. II դարում կատարված ղեկավարի կապակցությամբ հիշատակված իշխանի անունը (Արէլ). հավանաբար, հայ պատմիչի հնարածն է (ՀԱԱՐ, I, էջ 17)։

¹⁶⁵ ՍԵՐԵՈՍ, էջ 97։

¹⁶⁶ F. Justi, S. 21 (հղված է՝ Arrian. Acies c. Alan. 12), ՀԱԱՐ, I, էջ 270։

¹⁶⁷ Հիշյալ Արեւլ անձնանվան հարցը, որը Հ. Աճառյանի կարծիքով քրիստոնեական շրջանի փոխառություն էր հայերենում (տե՛ս ծան. 164), ըստ իրևույթին անհրաժեշտ է վերանայել։ Այսպես, եթե մ. թ. II դարում, այն է՝ քրիստոնեության մուտքից դեռ շատ առաջ, արդեն գոյություն ունեւր այդ անձնանվան հավելահյույուն բով տարբերակը՝ Արէլ>Արբէլ(ոս), ապա կարելի է վստահորեն ասել, որ տվյալ անձնանունը հայերենում պետք է գոյություն ունենար ոչ թե մ. թ. II դարից սկսած, այլ ավելի վաղ շրջանում։

¹⁶⁸ ՀԱԱՐ, III, էջ 194։ Մանան ձևը հանդիպում է նաև որպես ծագմամբ անհայտ արական անձնանուն (նույն տեղում, էջ 193), որը վկայված է հայերեն վիմագրերում Հովհաննես II Գարեղյան (557—574 թթ.) կաթողիկոսի օրոք, ինչպես Տեկորի իկեղեցու ավագ դուռն Բարաթորի արձանագրության մեջ. «<...> Տեկորոյ վանաց երիցու եւ Մանանայ հազարապետի հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհանու Հայոց կաթողիկոսի եւ Յոհանու Արշարունեաց <...>։ Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան» (Ղ. Ալիշան. Շիրակ. Տեղագրութիւն պատկերացոյց. Վենետիկ, 1881, էջ 132)։

¹⁶⁹ Բարսեղ վ. Սարգիսեան. Մայր ցուցակ հայերէն ձևագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. I, 1914, էջ 617—618։

վաճ ավանարանի ավելի ուշ գրված հիշատակարանում. «Ջվերչին ստացող սուրբ աւետարանիս, որ եղ յիշատակ <...> եւ մամուն՝ Մանանին <...>»¹⁷⁰ և այլն)» դարձյալ հայ. Մառնան (վկայված է Եղեգնաձորի շրջանի Արա-անսի վանքում 1586 թ. առաջ ընդօրինակված և Կամո քաղաքի Ս. Աստվա-ծածին եկեղեցում պահվող ավետարանի 1609 թ. գրված հիշատակարանում. «<...> Ջիկարին եւ որդոցն <...> եւ կողակիցին Մարնանայ <...>»¹⁷¹ 27) Երր. Մասեակ (սեւ ասէ Աբրամ<...>, որդի Մասեկայ ընդոծնի իմոյ<...>»¹⁷² հայ. Մառսեակ (սի Դամասկոսէ ասեն գնացեալ զՄառ-սեակն զընդոծին Աբրահամու<...>»)¹⁷³:

28) Հայ. Սասուն (հիշատակվում է XIII դարից սկսած)¹⁷⁴ կամ Սասունք (վկայված է 1564 թ. ընդօրինակված մի ձեռագրի 1608 թ. գրված հիշատա-կարանում «Սասունքին» ձևով)¹⁷⁵» դարձյալ հայ. Մառսուն (ինչպես, Վայոց ձորի Հերիբ գյուղից հայտնաբերված մի խաչքարի արձանագրության մեջ. «Թվ(ին) ՉԼԹ (1283) ես Ստսնայս ու Սարսուն(ն) ու Սարքիս կանգ(ն)եցաք յխաչս<...>»¹⁷⁶, ինչպես նաև զրանից ուղիղ 101 տարի հետո՝ Նախիջև-նում ընդօրինակված մի ձեռագրի էջերից մեկի նկարադարձ վերնագրի վերե-վում կատարված հիշատակության մեջ. «Ի Հայոց ՊԼԳ (1384) Սալիթաղեցի Սարսուն ֆրա տէրունական խոստովանահայրն կախուեցաւ»¹⁷⁷:

Հավելանյութն Ե-ի առկայությունը հայկական անձնանուններում բեր-ված օրինակներով չի սահմանափակվում¹⁷⁸, Սակայն ասվածն էլ բավական է հիմնավորապես հաստատելու, որ երկու հազար տարի շարունակ գործող այս հնչյունական երևույթը (մ. թ. ա. II դար—մ. թ. XIX դար), որ հիմա էլ շա-րունակում է իր երթը հայերենի բարբառներում, գոյություն է ունեցել ոչ միայն հայերենի բառապաշարում և հայկական անձնանուններում, այլ նաև, որ շատ ավելի կարևոր է, Հայկական լեռնաշխարհի տեղանուններում, որի ուսումնասիրությունը, ինչ խոսք, կարող է նոր լույս սփռել այն հնագույն տեղանունների վրա, որոնք դեռևս չեն տեղորոշվել կամ չեն ստուգարանվել

170 Թ որդոմ արքեպ. Գուշակեան. Յուդակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վա-նուց ի Սեբաստիա. Վիեննա, 1961, էջ 33:

171 Հ. Յ. Ա ճ ա ո ճ ա ն. Յուդակ հայերէն ձեռագրաց Նոր-Քալազետի. Վիեննա, 1924, էջ 15ա:

172 Գիրք Մենգոց, ԺԵ, 2:

173 Սեբեոս, էջ 52: Տվյալ համեմատությունը պատկանում է Ս. Կանայանցին (Ս տ ե փ ա ն Կ ա ն ա յ ա ն ց. Անհայտ դավանելի Հին Հայաստանի. Վաղարշապատ, 1914, էջ 35):

174 ՀԱԱՐ, IV, էջ 399—400:

175 Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, I, կաղմեցին Վ. Ա. Հակոբյան, Ա. Գ. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 310 (№ 375):

176 Դիվան, III, էջ 45 (№ 120): Անձնանվան (ն) տառի հավելումը կատարված է մեր կողմից:

177 Թ ո վ մ ա յ Ա ք ո ի ն տ ց ի. Յաղագս տեօրինութեան Քրիստոսի. ախիշեան, 1383—1384 թթ., էջ 103ա: Բնագրի միկրոֆապովներ պահվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 68), որի վերալերյալ մեզ տրված տեղեկությունների համար շնոր-հակալություն ենք հայտնում Ա. Ա. Այվազյանին: Մեջբերման ուղղորդման թարգմանությունը (Аргам Айвазян. Памятники армянской архитектуры Нахичеванской АССР. Ереван, 1981, с. 79), անշան լափով տարբերվում է հայերեն բնագրից:

178 Ինչպես, Եղիսարեթ (Դիվան, IV, էջ 59, № 226, էջ 270, № 1259) կամ Եղիսարեթ (Դիվան, III, էջ 69. № 193, էջ 160, № 478), Եղիսարեթ (ձեռագրերի հիշատակարաններում), Բայց նաև՝ Եղիսարեթ (ձեռագրերի հիշատակարաններում), Յարեթ (Գիրք Մենգոց, Ժ, 1, Մ ո վ ս ե ո խ ո Ր ե ն ա ջ ի, էջ 42), Բայց նաև՝ Յառ(ր)եթ Անսուն ժամանակա-զույթուն, Վենետիկ, 1904, էջ 21, Ժան. 1), Սմբատուհի (Մ ո վ ս ե ո խ ո Ր ե ն ա ջ ի, էջ 194), Բայց նաև՝ Սմբատուհի կամ Սմբատուհի (նույն տեղում, էջ 162 և Ժան. 19) և այլն:

և, այդ իսկ պատճառով, գիտություն համար մնացել են անհայտ: Կարելի է վստահորեն ասել, որ նման ուսումնասիրությունը կարող է անսպասելի անակնկալներ մատուցել ուրարագիտության և հայագիտության որոշ լիակատար հարցերի¹⁷⁹:

ДЕТЕРМИНАНТ «Р» В АРМЯНСКИХ АНТРОПОНИМАХ

О. О. КАРАГЕЗЯН

Резюме

В армянском языке, наряду с некоторыми детерминантами, встречается также детерминант «р», который в большинстве случаев ставится после открытого гласного первого слога слова. Например, ha-ža-nel (հա-ձա-նել) — ձա-ձա-nel (բար-ձա-նել) «разделить, отделить», tu-žel (տու-ձել) — ձա-ձել (տու-ձել) «пострадать», da-šoyu (դա-շոյն) — ձա-ձոյն (դա-շոյն) «кинжал», da-žan (դա-ձան) — ձա-ձա (դա-ձան) «жесток» и т. д. Надо отметить, что данное явление прослеживается не только в лексике армянского языка вообще, а также в армянских антропонимах, встречающихся в армянской историографии, памятных записях, эпиграфике, надгробных памятниках, на хачкарах и т. д. Например, *Gařul (*Գաղուլ) > Gařul (*Գաղուլ) > Gařul (*Գաղուլ), Artaxerxes ('Արտաշէսէս) > Artaxerxes ('rtksrk[s]), *Wa|aš (*Վաղաշ) > *Wa|aš (*Վաղաշ) > Wa|arš (Վաղարշ), Ašušā(y) (Աշուշայ, ['Աշ]ուշայ, Աշուշ) > Ar-šušā (արշուշ), Basil (Բասիլ) > *Barsil (*Բարսիլ) > Barsil (Բարսիլ) > Barsel (Բարսիլ), *Basil || Baš| (*Բաշիլ > Բաշիլ) > Baršl (Բարշիլ) > Baršl (Բարշիլ), Wasil (Վասիլ) > Warsil (Վարսիլ), Wazgēn (Վազգէն) > Wasken (Վազգէն) > Warsken (Վարսկէն), Asot (Ասոտ) > Aršot (Արշոտ), Zawēn (Հաւէն) > *Zarwēn (*Հարաւէն) > Zarwēn (Հարաւէն) > Zōrēn (Հորէն), Miklč (Միկլիշ) > Mirkilč (Միրկիլիշ), Nazar (Նազար) > Narzar (Նարզար), T'at'ar (Թաթար) > T'art'ar (Թարթար), T'amar (Թամար) > T'armar (Թարմար), Musa (Մուսա) > Mursa (Մուրսա), Busa (Բուսա) > Bursa (Բուրսա), Bu|a(y) (Բուլայ) > Bur|a (Բուրլա), Hawan (Հաւան) > Harwan (Հարվան), Konak (Կոնակ) > Kornak (Կորնակ) > Korak (Կորնակ), Wašlr (Վաշլր) > Waršlr (Վարշլր), Wasak (Վասակ), Vasaces 'Վասակ, Վասակէս, Bazarzaz, Bazarzaz > Warsak (Վարսակ), *Jiovan (*Ջիովան) > Jiorvan (Ջիորվան), Sadun (Սադուն) > *Sardun (*Սարդուն) > *Sadurn (*Սադուն) > Sadorn (Սադորն), Bagrat (Բագրատ) > Barqrat (Բարգրատ), Abēl (Աբէլ) > Arbēl(ոս) ('Արթիլոս), Manan (Մանան) > Marnan (Մարնան), Maseak (Մասեակ) > Marseak (Մարսեակ), Sarsun (Սարսուն) > Sarsun (Սարսուն) и т. д.

Выявление и исследование данного явления в армянской лексике вообще и особенно в армянских антропонимах, действующего две тысячи лет подряд (II в. до н. э. — XIX в. н. э.), существующего в армянских диалектах и поныне, делает возможным проследить такую закономерность также в топонимах Армянского нагорья (в клинописный и в последующие периоды), этимология и локализация которых в большинстве случаев была невозможной, что иногда создавало путаницу и вносило в научный обиход несостоятельные и порою тенденциозные гипотезы, не имеющие никакого отношения к науке.

¹⁷⁹ Տվյալ հարցին նվիրված մեր հոդվածը՝ «Հավելափնտրելով «ր»-ն Հայկական լեռնաշխարհի տեղանուններում» գիրքագրով, նույնպես պատրաստ է տպագրության: